ՀՀ շրջակա միջավայրի նախարարության
գլխավոր քարտուղար Գ. Գուլյանին

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
2023 թվականի մայիսի 29-ից մինչև 2023 թվականի հունիսի 2-ը ներառյալ Շվեդիայի Թագավորություն, քաղաք Լունդ գործուղման վերաբերյալ

Գործուղվող անձ
Իրավախորհրդատու Մարի Չաքրյան

Երկիր/քաղաք/ժամկետ
Շվեդիայի Թագավորություն, քաղաք Լունդ,
2023 թվականի մայիսի 29-ից մինչև հունիսի 2-ը

Հրավիրող կողմ
Շվեդական ինստիտուտ և Լունդի համալսարան

Նպատակը
Մասնակցել որոշումների կայացման գործընթացքում ներգրավված մարմինների կարողությունների զարգացմանը միտված ծրագրի շրջանակում կազմակերպված քաղաքային միջավայրում բնահենք լուծումների նորարարական կառավարման վերաբերյալ աշխատաժողովին:

Մասնակիցների շրջանակ
Ծրագրի թիրախ երկրների՝ Հայաստան, Ադրբեջան, Վրաստան, Ուկրաինա, Մոլդովա, 2022-2023 թթ. մասնակիցներ և 2021-2022 թթ. ծրագրի ընտրված շրջանավարտներ:

Օրակարգում.
- ✓ Կոնֆերանս շրջանավարտների մասնակցությամբ. փորձի փոխանակում և նախագծերի պաշտպանություն,
- ✓ Թիմային աշխատանք, կարողությունների զարգացման վարժություններ,
- ✓ Ծրագրի թիրախ երկրների կարիքների գնահատում,
- ✓ Այց Մալմոյի համալսարան, Քաղաքային հետազոտությունների ինստիտուտի կողմից դասախոսություն և դաշտային այց քաղաքային հանրային կանաչ տարածքներ:

Ելույթներ
Ներկայացրել եմ Հայաստանում բնությունը, կենսաբազմազանությունը քաղաքային միջավայր վերադարձնելու լուծումների ներդրման հնարավորությունները: Բնահենք լուծումների ներառմամբ բնակավայրերի նորարարական կառավարման մոտեցումների ներդրման համար ներկայացրել եմ երկու առաջնահերթ գործողություններ՝ կարողությունների զարգացման և իրավական հիմքերի

ստեղծման անհրաժեշտությունը: Մասնավորապես Երևանի բուսաբանական այգին, որպես քաղաքային միջավայրում բնահենք լուծումների (NbS) տեսանելի օրինակների ներկայացման և շահագրգիռ կողմերի կարողությունների զարգացման կրթական կենտրոն դառնալու նախաձեռնությունը: Ներկայացրել եմ նաև Դիլիջան քաղաքի օրինակով ներկայումս իմ կողմից մշակվող բնահենք լուծումների ներառմամբ Կանաչ քաղաքի պլանի կազմման ընթացքը, հիմնական շեշտադրումները: Նշել եմ, որ կարիք կա վերանայելու համայնքների զարգացման հնգամյա ծրագրերը և դրանցում ներառել բնահենք լուծումների նորարարական մոտեցումներ: Դիլիջան քաղաքի դեպքում չափազանց կարևորել եմ բնահենք լուծումների, օրինակ կանաչ միջանցքների ներառումը ազնվացեղ եղջերուներին բնական ապահով միջավայր վերադարձնելու տեսանկյունից:

Արդյունքներ

- ✓ Ներկայացված նյութը գնահատվեց հետաքրքիր և օրինակելի:
- ✓ Ներկայացման ժամանակ լսարանի ներգրավման իմ կողմից կիրառված գործիքի միջոցով հավաքագրեցի հետաքրքիր առաջարկներ բարելավելու Դիլիջանի Կանաչ քաղաքի ծրագիրը, հատկապես պոտենցիալ շահակիրների ներգրավման առումով:
- ✓ Վրաստանի ներկայացուցիչը առաջարկ էր ներկայացրել, որ ծրագրի շրջանակում նաև բարձրաստիճան պաշտոնյաներ հրավիրվեն, որպեսզի առավել արդյունավետ լինի ստացած տեղեկությունների ու գիտելիքի ներդրումը թիրախ երկրներում: Որոշվեց աշնանը կազմակերպել այց/study tour նախարարների/փոխնախարարների և համայնքների ղեկավարների համար:
- ✓ Ծրագրի շրջանավարտները ներկայացրեցին նաև այլ առաջարներ, օրինակ ներառել նաև կլիմայի փոփոխության հարմարվողականության ու էներգախնայողության հարցերը, ավելի մեծ թվով շահառուների ներգրավման նպատակով կազմակերպել թրեյնինգ թրեյներների համար և այլն: Բոլոր առաջարկները ողջունվեցին և կդիտարկվեն Շվեդական ինստիտուտի կողմից՝ առաջիկա ծրագրերի պլանավորման ընթացքում:

Պայմանավորվածություններ

Համագործակցության, համատեղ ծրագրերի նախագծման պայմանավորվածություններ են ձեռքբերվել Վրաստանի ներկայացուցիչների հետ:

Շրջակա միջավայրի նախարարության իրավախորհրդատու՝ 
Մարի Չաքրյան
6.06.2023